

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության տարածքային կապիտալ ծրագրերի աջակցության բաժնի մասնագետի (ծածկագիր՝ 22-33.4-Մ6-3) թափուր պաշտոնը համալրելու համար մրցույթ հայտարարելու**

### մասին

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է մրցույթ տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության տարածքային կապիտալ ծրագրերի աջակցության բաժնի մասնագետի (ծածկագիր՝ 22-33.4-Մ6-3) և վարկանիշային ցուցակի համապատասխան համարներում գրանցված անձանց հրավիրում է հարցազրույցի, որը տեղի կունենա 2021 թվականի սեպտեմբերի 17-ին, ժամը՝ 15:00-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական շենքում (ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Կառավարական շենք N 3):

Հարցազրույցին հրավիրվող անձը հարցազրույցի օրը պետք է ներկայացնի հետևյալ բնօրինակ փաստաթղթերը՝

- 1) անձնագիր (ԳԾ համարանիշ)։
- 2) դիպլոմ (առկայության դեպքում)։
- 3) աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում)։
- 4) արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասից զինվորական կցագրման վկայական կամ համապատասխան տեղեկանք։

Հարցազրույցը կանցկացվի <<Հարցարան>> ձևաչափով։

Հիմնական աշխատավարձի չափը կազմում է՝ 111115 (մեկ հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ։

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվություն ստանձնելու կարողություն։

Քաղաքացիական ծառայության նշված թափուր պաշտոնի անձնագրի էլեկտրոնային տարբերակը կցվում է։

Աշխատավայրի հասցեն՝ ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Կառավարական շենք N 3:

Վարկանիշային ցուցակում գրանցված անձանց հարցազրույցի հրավիրելու համար տեղեկացնելու վերջնաժամկետի օրն է 2021 թվականի սեպտեմբերի 14-ը։

Անհրաժեշտ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 010-511-318, 010-511-355 հեռախոսահամարով կամ ուղարկել հաղորդագրություն [n.kirakosyan@mta.gov.am](mailto:n.kirakosyan@mta.gov.am) էլեկտրոնային փոստի հասցեին։

*<<Փոփոխություն  
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների  
նախարարության գլխավոր քարտուղարի  
2021թ. մարտի 23-ի N 17-Լ հրամանի>>*

**Հավելված N 49**

Հաստատված է

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների  
նախարարության գլխավոր քարտուղարի  
2019թ. հոկտեմբերի 8-ի N 38-Լ հրամանի

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

**Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային  
(կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման  
վարչության տարածքային կապիտալ ծրագրերի աջակցության բաժնի**

**մասնագետ**

<p><b>1. Ընդհանուր դրույթներ</b></p>
<p><b>1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը</b></p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) տարածքային կապիտալ ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության (այսուհետ՝ Վարչություն) տարածքային կապիտալ ծրագրերի աջակցության բաժնի (այսուհետ՝ Բաժնի) մասնագետ (ծածկագիրը՝ <b>22-33.4-Մ6-3</b>)</p>
<p><b>1.2. Ենթակա և հաշվետու է</b></p> <p>Մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:</p>
<p><b>1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները</b></p> <p>Մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը կամ Բաժնի ավագ մասնագետը կամ Բաժնի մասնագետը:</p>
<p><b>1.4 Աշխատավայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3</b></p>
<p><b>2. Պաշտոնի բնութագիր</b></p>
<p><b>2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</b></p> <p>1) մասնակցում է Հայաստանի Հանրապետության մարզերում և համայնքներում ենթակառուցվածքների գ արգացմանն ուղղված քաղաքականության մշակման աշխատանքներին,</p>

- 2) մասնակցում է պետական բյուջեով նախընտրված ախտաբուժական հաստատությունների համար կատարվող աշխատանքների համար կատարվող աշխատանքներին,
- 3) մասնակցում է հեռավոր և սահմանամերձ համայնքներում բնակչության կենսապահովման բարձրացման, այդ թվում աշխատատեղերի ստեղծմանն ուղղված առաջարկությունների մշակման ու ներկայացման աշխատանքներին.
- 4) մասնակցում է պետական բյուջեի նախընտրված ախտաբուժական հաստատությունների համար կատարվող աշխատանքների համար կատարվող աշխատանքներին,
- 5) մասնակցում է համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը և դրանց իրագործելիությանն ուղղությամբ կարողությունների զարգացման միջոցառումներին,
- 6) մասնակցում է Հայաստանի Հանրապետության մարզերի և համայնքների սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման, ամփոփման և վերլուծման աշխատանքներին,
- 7) մասնակցում է Հայաստանի Հանրապետության բնակավայրերում կլիմայի փոփոխությանն ազդեցություններին վազեցմանն ու հարմարվողականությանն, ինչպես նաև ենթակառուցվածքային աշխատանքների մշակմանը,
- 8) մասնակցում է Նախարարության պաշտոնական կայքի սպասարկման համար Վարչության մասով տեղեկատվական և վերլուծական նյութերի մշակմանը:

**Իրավունքները՝**

- Հայաստանի Հանրապետության մարզերում և համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված քաղաքականության մշակման աշխատանքների ընթացքում համապատասխան մարմինների ցպահանջելու ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն, հիմնավորումներ, փաստաթղթեր.
- Պետական բյուջեով նախընտրված ախտաբուժական հաստատությունների համար կատարվող աշխատանքների համար կատարվող աշխատանքների իրականացման ընթացքում համապատասխան մարմիններից տեղեկատվության ստացում.
- Հայաստանի Հանրապետության մարզերում և համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակմանն իրագործման աշխատանքների ընթացքում համապատասխան մարմիններից մասնագիտական կարծիքներ և անհրաժեշտ տեղեկատվության ստացում.
- Մարզային նշանակության պատակային ծրագրերի րականացնող միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության աշխատանքների մասնակցության ընթացքում միջազգային կազմակերպությունների հետ տեղեկատվության ստացում, ծրագրի յուրահատկությունների ցրտող առաջարկներին ներկայացում և քննարկումներին մաս

նակցություն.

- Համայնքներում տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերի նուղղված ներդրումային ֆոնդերի, հիմնադրամների, միջազգային ֆինանսական հաստատությունների մասնավոր ներդրողների հետ աշխատանքների մասնակցության ընթացքում առաջարկությունների քննարկում, ներկայացվող ներդրումային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունների ստացում, ներկայացվող ծրագրերի ՀՀ-ում կիրառելիության արդյունավետության վերաբերյալ քննարկումների մասնակցություն, առաջարկությունների ներկայացում.
- Նախապատրաստում է իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր.

### **Պարտականությունները`**

- Հայաստանի Հանրապետության մարզերում և համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված քաղաքականության մշակման աշխատանքներին մասնակցություն, անհրաժեշտ տեղեկատվության ուսումնասիրում,
- Պետական բյուջեով և այլ միջոցներով նախատեսվող Հայաստանի Հանրապետության մարզերի և համայնքների զարգացման ծրագրերի քննարկման և համադրման աշխատանքներից բխող պարտականությունների իրականացում, ինչպես նաև Վարչության պետի հանձնարարությամբ տվյալ գործառնությունից բխող ընթացիկ աշխատանքներին մասնակցություն,
- Հայաստանի Հանրապետության մարզերում և համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման և իրագործման աշխատանքների իրականացումից բխող հնարավոր ներդրումային ծրագրերի մշակման, քննարկման աշխատանքներին մասնակցություն, անհրաժեշտ տեղեկատվության ուսումնասիրություն.
- Մարզային նշանակության նպատակային ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության մասնակցության ապահովում` համատեղ իրականացվող ծրագրերից բխող աշխատանքներին մասնակցություն, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ իրականացվող աշխատանքների օժանդակություն,
- Շահագրգիռ գերատեսչությունների հետ համագործակցություն, համատեղ աշխատանքներին մասնակցություն:

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ**

#### **3.1 Կրթություն, որակավորման աստիճանը**

Կրթությունը՝ առնվազն միջնակարգ կրթություն

### **3.2 Մասնագիտական գիտելիքները՝**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

### **3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն**

Աշխատանքային ստաժ չի պահանջվում:

### **3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

**Ընդհանրական կոմպետենցիաներ**

1. Հաշվետվությունների մշակում
2. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
3. Բարեվարքություն

**Ընտրանքային կոմպետենցիաներ**

1. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
2. Ժամանակի կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրաստում

## **4. Կազմակերպական շրջանակ**

### **4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման համար:

### **4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

### **4.3 Գործունեության ազդեցությունը**

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

### **4.4 Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ շփվում է պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

#### **4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնագիտական խնդիրների բացահայտմանը և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն: